

Perry 14

112 - 124



**Յ. Շահպազեան**

**ԲՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ**

**ՍՏԵՂՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ**

Ասլան Աղէն	Ճամփազի Աղջիկը
Վիրաւորեալն ու Նշանլուն Հարսն ու Փեսայ ձեան տակ	
Առնոս Սարը	Ծամն ի Ծովին
Քեսւմիկի պազիկը	Սամար ի Քուն
Աղջիկ՝ Տղին	Քրտնած Եար
Պատիկ Դուսր	Ուկոյի Մազերը եւ Սայարի
Պրինսար Մրժիկ	Մծերը
Խուրդին Պաղչէն	Խնձորը
Թուլս Աշենրը	Սանտի Խաղը
Պրինսար Աղջիկը	Տօյա
Կարմեր Երեսի Պազը	Երկնուց Տարկեախմեր
Քեաֆուր Վարդէ Թոււը	Զրկուած Հարսը
Ասդէ Կոնակները	Հանելուկ եւ Պատասխան
Կալամով Փողպատը	Տիլպէր
Բարկ Սէր	Չիմք չիմ
Նազօ Տիլպէր	


891. 99-1  
Յ. ՇԱՀՎԱՅՐԱՆ

## ԲՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Հոգուց Բիոսքի արդե  
նարակի տառ բարձ:

1914-Հյութ  
Հոգու



ԵՐԿՈՒԻ ԽՕՍՔ

3848

Ատեղծագործութիւնը որ խաւարէն ի լոյս կը բերէնք, մեծ հոգևորով ու խճամքով քաշած հանած ենք այն հայ ժողովուրդի ծոցէն՝ որ կ'ապրի հայկական լեռանց գօտիներու մէջ, ձանապարհներու գժուարամատչէլի յարաբերութեանց պատճառաւ կտրուած օտար հաղորդակցութիւններէ ու ազդեցութիւններէ՝ որով եւ մնացեր է մինակիկ, ինքնամփոփ, ինքնուրոյն եւ ինքնաստեղծ:

Հազիւ մէկ դար կայ որ այս ժողովուրդը իրականին մէջ կորսնցուցած ունի իր կիսանկախութիւնը՝ զերծ մնացած ըլլաւով զանազան հակումներէ, ստրկական համակերպումներէ եւ նմանութիւններէ, այդ վիճակում կարողացել է պահել զուտ հայկական ոգին՝ իրեն յատուկ նրբեն, իմաստալից եւ հայքի ոքանչացումներով կերտուած գեղարուեստին մէջ, որ զանազան երանգներով ի յայտ կը բերէ անոր հին ու նոր կրօնական, քաղաքական, զինուորական, ընկերութին, արհեստական եւ սիրային կեանքի հասկացողութիւններն՝ մօտաւորապէս երկու դարու գործ, պահուած պահապանուած Մոկից աշխարհում:

Այս ստեղծագործութեան լոյս աշխարհ ընծայելովը մենք բուն հայկական ձարտարարուեստի, հայկական պօէզիայի եւ հայկական երաժշտութեան եւ այլ շարքերու մօտ կուգանք պարծանքով դնելու եւ հայու ոգին որ բուն իսկ ինքն է — Հայկական Ատեղծագործութիւնը, որ մեզ վիճակեցաւ բերել մատուցանելու մեր աղդային ցեղական յատկութեանց թանգարանին:

Յ. Շահպազեան



120-2015  
ԿՊՀ

# ԲՈՒՆ ՀՅԱՂԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՐԸ ՈՒԹԻՒՆ

I

## ԱԾԼԱԽ ԱՆԿՑ

Ասլան աղէն նստեր մէջ սօղպիթին  
կուտէր խմէր էն անուշ նուան գինին  
Զէր զիտեր թէ մահ մեռնել կէր վէր Աստւորին .  
Պակսաւ ուր հաց պակսաւ գինին  
Խապար արաւ խզմաթքեարին ,  
Գնա՛ հասիր մէջ պազարին  
Պակսեր իմ հաց պակսեր գինին :  
Խզմաթքեար գնաց մէջ պազարին  
Տեսաւ աղքատ մեռեր մէջ մաղազին ,  
Տէր տիրական չը կէր էն աղքատին .  
Գլխու յիզար<sup>(1)</sup> իտուր քահանին ,  
Միջաց յիզար իտուր պատանք առեց աղքտին  
Խէրի<sup>(2)</sup> խամար աղքատ տարան վերուցին ,  
Տօր<sup>(3)</sup> , առաւ զիսաց առաւ գինին  
Յուշ խասաւ Ասլանի սօղպիթին .  
Ասլան աղէն ասաց , կուռումսաղ<sup>(4)</sup> ,  
Յէր ուշ խասար իմ սօղպիթին .  
Գացի տեսայ աղքատ մեռեր մէջ մաղազին  
Տէր տիրական չկէր էն աղքատին ,

(1) Յիզար կը նշանակէ ֆօշի որ քօլօզի բալորտիր կը կապեն

(2) Խէրի խամար = բարիք ընելու համար

(3) Տօր = այնուհետև :

(4) Կուռումսաղ = պարսիկ անարդական ասացուած մը

Գլխու յիզար տուեր եմ քահանին  
Միջաց յիզար տուեր եմ պատանիք առեր աղքատին,  
Որ աղքատ վերուցին էն ապով(1) յուշ հասայ քո սօղպթին  
Ո՞վ էր առեր իմ աղքատի հոգին .  
Գարրիէլ հրեշտակն առեր էն աղքատի հոգին :  
Էլի դուս քէշի իմ Պօղ-պէտավին(2),  
Կապի վերայ զին սէտափին(3),  
Զիմ ձեռն էլ տուր թուր քերմանին,  
Տ'երթամ կոխւ խետ Գարրիէլին  
Որ չգէր առնէր իմ աղքատի հոգին :  
Գուրպան էննեմ իմ Ա.ալան աղին,  
Էն Գարրիէլ հրեշտակ է երկնային,  
Լաղա(4) չունիս խետ(5) Գարրիէլին :  
—Կուռումսա՛ղ, չէ կասեմ դուս քէշի իմ Պօղ-պէտավին,  
Խզմաթքեար դուս քէշեց Պօղ-պէտավին,  
Չեռ բռնեց թուր քերմանին  
Գնաց էջաւ մէջ մէյտանին .  
Գարրիէլ հրեշտակ էջաւ մէյտան,  
Սրին կոխւ չում(6) կէսօրին՝ լամ աղին  
Գարրիէլ հրեշտակ կաստով(7) տառապ(8) կը զարնէր Ա.ա-  
Ա.ալան աղէն սրտով տառապ կը զարնէր Գարրիէլին .  
Որ էջաւ կոխւ չում կէսօրին  
Գարրիէլ հրեշտակ աչքեր շլեց վէր Ա.ալան աղին,

(4) Էն ապով = այն պատճառաւ,

(2) Պօղ-պէտավին = իր ձիռւ անունն է:

(3) Զին-սէտափին = ստոտափէ թամբ:

(4) Լաղա = դործ :

(5) Խետ = հետ (լս տառ շատ անդամ իի տեղ առնուած է):

(6) Չում = մինչև :

(7) Կաստով = ոչ-իսկական, կեղծ:

(8) Տառապ = հարուած:

Թուր ձեռնէն ինկաւ գետին,  
Աւալ թաւալ ինկաւ վէր տէօշակին.  
Գարրիէլ հրեշտակ կայնաւ վէր պէյնին  
Ա.սաց մկա(1) տ'առնեմ քու քաղցր հոգին,  
Եան(2) հոգի մը տի բերես քո հոգու փոխանին .  
Խէր(3) իկաւ ասաց, կուրպան էլնեմ Ա.ալան աղին,  
Ցէր ինկեր ես վար քու տէօշակին .  
Գացեր եմ կոխւ խետ Գարրիէլին.  
—Տուր զքու Պօղ-պէտավին,  
Տուր զքու զին սէտափին,  
Տուր զքու եօթ պուրձ(4) ոսկին,  
Մի՛ տար քու քաղցր հոգին :  
Էն Գարրիէլ հրեշտակն է երկնային,  
Թմախ չահներ աստորի մալին,  
Խոգի կ'ուզի իմ խոգու փոխանին :  
Հինգ հարիւր տարի ումբ արի վէր աստորին  
Ցէլէ ես նորափիսալ եմ ոսկաթոռին  
Իմ խոգին չիմ իտայ քո խոգու փոխանին :  
Մայր եկաւ ասաց կուրպան էննեմ Ա.ալան աղին,  
Ցէր աւալ թաւալ ինկեր ես վէր քու տէօշակին .  
Գացեր իմ կոխւ խետ Գարրիէլին.  
Տուր զքու Պօղ-պէտավին,  
Տուր զքու զին սէտափին,  
Տուր զքու եօթ պուրձ ոսկին,  
Մի՛ տար քու քաղցր խոգին :  
—Էն Գարրիէլ իրեշտակն է երկնային

(4) Մկա = հիմա :

(2) Եան = կամ:

(3) Խէր = հայր :

[Կամ պուճախ]

(4) Պուրձ = բերդերու անկիւններ գտնուած աշտարակներ,

Թմախ չունի աստւորի մալին .

Խոգի կ'ուզիմ խոգու փոխանին :

Հինգ հարիւր տարի ումր արի վէր աստւորին :

Տէլ սկուն(1) նորախարս եմ քօղք երեսին :

Իմ խոգին չըմ իտայ քու խոգու փոխանին :

Տօր, կին եկաւ ասաց . կուրպան էլնեմ Ասլան աղին :

ԵՇըր աւալ թաւալ ինկեր ես վար քու տէշկին :

—Գացեր իմ կոխ խետ Գարրիէլին :

Տուր զքու Պօղ-պէտավին,

Տուր զքու զին սէտավին,

Տուր զքու եօթ պուրձ ոսկին,

Մի՛ տար քու քաղցր խոգին :

Էն Գարրիէլ հրեշտակն է երկնացին,

Խոգի կ'ուզի խոգու փոխանին ,

Թմախ չանի աստւորի մալին :

Կին ասաց, ես չէր գիտէ թէ խոգի կ'ուզէր խոգու փոխանին

Ես խալալ սրտով իմ խոգին կը տամ քո խոգու փոխանին

Որ ձիկ չտաեն էրին(2) որբ և էրին :

Գարրիէլ խրեշտակ խոգին քաշեց էնան վար պոռտին :

Էսաց քեզի կասեմ Ասլանի կին .

Շատ աղէկ ճէէլ կան վէր աստւորին քանց Ասլան աղին,

Քո խոգին մի՛ տար Ասլան աղի խոգու փոխանին :

Տօր, խոգին քաշեց էնան վէր սրտին .

Ասաց քեզի կասեմ Ասլանի կին .

Շատ աղէկ մարդ կայ զէտա(3) վէր աստւորին ,

Քո խոգին մի՛ տար Ասլան աղի խոգու փոխանին :

—Խալալ սրտով իմ խոգին կուտամ իր խոգու փոխանին :

(1) Տէլ սկուն = դեռ եւս :

(2) Էրին էրին = այրի :

(3) Զէտա = գերազանց :

Գարրիէլ հրեշտակ հոգին քէշեց ենան վէր պէօկին(1)  
Քեզի կասեմ Ասլանի կին . շատ կանաչ կորիճ կան քանց  
Ասլան աղէն վէր աստւորին .

Լուսին, արեգակ արիմ շըհէտ, խոգիս կուտամ Ասլան  
աղի հոգու փոխանին :

Գարրիէլ խրեշտակ խոգին եթող վէր պէօկին  
էլ գնաց մօտ աստուածութեն .

Հարցում կանեմ Ստեղծողին .

Հայր մայր խոգի չտուած որդւոյ հոգւոյ փոխանին .

Կին օտար աղջիկ է, հոգի կուտայ անու փոխանին :

—Տէլ թուբին չլցուեր էն հարմաթին(2),

Գնա՛ առ էն հօր մօր խոգին . [կնիկին .

Հինգ հարիւր տարի ումր եմ տուեր Ասլան աղին ու իր  
Արին կէշտ ու սէֆա .

[Մոկացի աւրզ Օվանէ երգուած]

## II

### ՎԻՐՁԱՌՈՐԵԱԼՆ ՈՒ ՆԵԱՆԱԼՈՒՑ

Նշանակուն . — Կ'իրիշկեմ սարեր վեր, ձիւներ չեն խալեր .  
Բանձր սարեր կիրիշկեմ մըժ մօրսն էր .

Միրնասէր հեծելուց եկեր պէ հալն էր .

Ախալէր շուկէն իջեր էր հէքիմ կը ճարէր .

Վիրաւորն . — Կ'իրիշկեմ պօյդ վեր պօյդ թամամ էր .  
Կիրիշկեմ ծծուերդ վեր ծծուերդ շամամ էր .  
Կիրիշկեմ աչքերդ վեր՝ աչքերդ Զինու

կթիւայ(3) էր :

(1) Պէօկ — կոկորդ :

(2) Հարմաթ — կին :

(3) Կթիւայ — Գինիի չինական կլոր գոււած :

## III

## Ա Բ Ն Ո Ս Ս Ա Ր Ը

Առնոս բանձրիկ սար .  
 Զեր քու նման .  
 Քո ետև դեխ(1) Մոկո  
 Առջեւ դեխ(2) Աղօթրան .  
 Քո բոլորն է ասա(3) քար,  
 Վեր քո զլսուն կայ Սրբոց Դերեղման .  
 Երկու պաղ ախափւր քո տակէն կ'երթան,  
 Մէկ կ'երթայ դեխ պառին(4)  
 Մէկն էլ կ'երթայ դեխ զօղան(5) .  
 Էն ինչ կ'երթայ դեխ պառին  
 Կարիպ խաւքերաց ,  
 Էն ինչ կ'երթայ դեխ Զօղան  
 Գառն ու մաքերաց .  
 Ամագեր կարավէլ(6) կապած  
 Թուխս ամպն էր Սէրասքէր ,  
 Գացին զԱռնոս տուխն յէսար(7) .  
 Էնա կոռաշապ կանչեց , Սոնոս ,  
 Ի՞նչ տի լինի քո խուն ու ճար .

- (1) Դեխ = դէպի ;  
 (2) Լոս = լոյս ;  
 (3) Ասա = անառակ , ըմբոստ ;  
 (4) Պառին = հարաւ , ջերմ երկիրներ (Ճմերց) ;  
 (5) Զօղան = հովասուն վայրեր , ամարանոց ;  
 (6) Կարավէլ = պահակ կանգնած , կապած ;  
 (7) Տուխն յէսար = պաշտրեցին :

## Առնոս

Մօս ձիկ դեկտեմբեր ամիս քան ժում Վարտօվար:(8)  
 Երկինքն էր ամպեր խոնաւ կէր գալու .  
 Եարագրէք(9) իմ ձին թամքեցէք սաֆար(10) կայ գնալու ,  
 Թուխս աչք խոռվեր , քար էլեր լալու :

## IV

## ՔԵԱՇՄԻԿԻ ՊԱՓԻԿԱ

Քեաշմիկ , երէկուընէ Պէստ(11) կապեցին  
 Տղի երես ծածկեցին  
 Ոտնակոտոր չէմք եզրեցին(12) ,  
 Քեաշմիկ քո մօր մէջքն էր կանաչ ,  
 Քո խէրանց տուն Սրբահամոնց(13) .  
 Սրբահամոնց Պէստայ դիմաց ,  
 Պէստայ(14) սուրբ Գորդ բազմի դիմաց :

(8) Ժում Վարտօվար = բուն Վարդավառ :

(9) Եարագրէք = սիրելը այդ ճամբորդութիւնն ընել :

(10) Սաֆար = նորէն այդ ճամբորդութիւնն ընել :

(11) Պէստ = Մոկաց Անձղոնց թաղին վերև՝ սարի ածուն է ,  
 և աւերակ բերդ :

(12) Շէմք եզրել = դռնէն դուրս ելլել :

(13) Սրբահամոնց = Մոկաց գիւղաքաղաքի թաղերէն արեւ-  
 մտեան թաղն է :

(14) Պէստայ սարին գլուխ՝ աւերակ բերդին մէջ աւերակ  
 մտառաւ . մը կայ Ա. Գէորգ անուն , Ա.ն աւերակ  
 մտառաւի մի Աւերարանը հիմա Դաշտի թաղի ե-  
 կեղեցին է , Մէզրէ գիւղացի քիւրտ ճափօ որ 30 տա-  
 րի առաջ մեռէր է (1892էն առաջ) . չգիտցուիր ի՞նչ  
 աւանդութեամբ՝ ամէն կիրակմտին Դաշտ թաղէն  
 մինչ Պէստայ գլուխ Յ ժամու ճամապարհ կը գնայ  
 և հոն Ա. Գէորգի աւերակ մտառախն ճըռգ կը վա-  
 ռէ , Աւերակի տօնին Մոկացի կիներ հոն ուիտի  
 կ'երթան :

Քեաշմիկ, գացինք խասանք վէր կարմիջին,  
 Խանենք դդաժէն խագնենք զիսին  
 Քեաշմիկ, ևս դու ենանք կարիսպութին,  
 Կարիսպութին, տու զերութին:  
 Գացինք խասանք ջաղցներու թաղ,  
 Երկու աղջիկ խանած են խող,  
 Մէկ Խանաղայ մէկն էլ ձանաղայ(1).  
 Գացինք խասանք կլոր քարեր,  
 Քեաշմիկ առեց կոճակ շարել.  
 Քեաշմիկ, յիվիմ կանեմ ձիկ պագ մը տուր,  
 Երես կանեց(2) չարաւ դէստուր.  
 Գացինք խասանք Լճանու ջուր,  
 Խաւքիր կը գան յուկուր ուկուր,  
 Թռան գացին Սարգիս ախազիւր,  
 Սարգիս ախազիւր պազեր էր ջուր,  
 Ինչ խաւք խմի, թե կը մազի:  
 Գացինք խասանք չում Ակնդաշտ.  
 Քամիւ եկաւ քանց կըզըլպաշ,  
 Քեաշմիկ, ևս տու տ'էրթանք Գաւաշ.  
 Գացինք խասանք Մըզըլէրիր.  
 Զիւն էր իկեր կարեր էր ջուր.  
 Պատու պէրեր, մալիւլ էլան շօշրաստարներ,  
 Գացինք խասանք չիւմ Բիւտիչն.  
 Լաճ բնկաւ միտ, կրակ ինկաւ Մոկաց շուկէն(3)  
 Քիւրտ կ'սպաննեն, Հայ կը թալնեն(4).

- (1) Խանաղայ, ձանաղայ = Երկու աղջկանց անուններն են:
- (2) Երես կանեց = մէկ կողմ ծռեց:
- (3) Մոկաց շուկան կրակ իջնալ = սիրտը կրակ իջնալ:
- (4) Քիւրտ կ'սպաննեն, Հայ կը թալնեն, կը նշանակէ սրտի  
մէջ ծագած աղմուկ, տրաման:

Քեաշմիկ, գացինք խասանք չում կաներ,  
 Աղջիկ առեց հոգւոց հանել:  
 Քեաշմիկ, յիվիմ կանեմ իմ պազիկ տուր.  
 Երես կանեց չարաւ դէստուր.  
 Քեաշմիկ, գացինք խասանք վէր Եղիրովայ գլխուն  
 Երկինքն ամպ ի, կուգայ մուրմուրիկ ձիւն.  
 Քեաշմիկ, յիվիմը կանիմ իմ պազիկ տուր,  
 Քեաշմիկ երես իաւեց չարաւ տէստուր.  
 Գացինք խասանք Կաքուան աղպիւր.  
 Կաքու կուգան նիշուն նիշուն,  
 Քեաշմիկ յիվիմ կանիմ իմ պազիկ տուր,  
 Երես չկանեց. Տօր արաւ դէստուր:

## V

## Ա Զ Ջ Ի Կ Տ Զ Ղ Ի Կ

## Աղջիկ

Արեւն առեց Առնոսայ քար (հա ճինտէ լավկէ Միրան)  
 Մէջք տուեր ես առփշմէ ճար (հա ճինտէ լավկէ Միրան)  
 Աստուած սիրես արե ձիկ տու (խոտօ թռաւանէ Միրան)  
 Արեւն առեց վէր մեր զեղին (հա ճինտէ լավկէ Միրան)  
 Մէջք ես տուեր կարմիր զեղին (հա ճինտէ լավկէ Միրան)  
 Կարմիք երես վէր թռուխ պեղին (հա ճինտէ լավկէ Միրան)

## Տղեն

Վերե մեր տան ծառ կէր տանձի (հարէ ճինտէ լավկէ Միրան)  
 Վարս խաներ ես կանձի(5) մանձի (հարէ ճինտէ լավկէ Միրան)  
 Քոխոր ա'սեմզ զքե տայ ձի (ինձ) (հարէ ճինտէ լավկէ Միրան)

(5) Խանձի մանձի = ոլոր ժոլոր:

## VI

## ՊՍՏԻԿ ԴՕՍՏԵ

Քեամին իրեւ աշնան նշան էր  
Պլպիւլ խոռվէր կումրի քէօշ(1) կանէր .

Մէկ դօստ , քո դարտէն ձի (ինձ) տըթալեմ գարնան գետեր  
Տանէր թող տանէր , չուժ Մուսուլ տանէր , Շամկեառ դուս  
իսանէր

Ոչ մէրիկ ունիմ որ գլխուս նստէր  
Ոչ քուրիկ ունիմ ծամեր էրանէր(2) .

Պստիկ դօստմ' ունիմ , թէ անիկ զիւր խալաւ փոխէր  
Աշխար հետ շախուն եռ եմ խետ խամուն(3)

Խամեր շատացած կուսանց անսախուն(4)  
Տ'էլնիմ խետ բանձրիկ սարերուն

Խամեր տը տամ աշնան քեամուն :

## VII

## ՊՐԻՆՏԱՐ ՄՐՏԻԿ(5)

Եմն եմ հին խոցւոր , դաժա(6) պրինտար

Պրին խոր ինկեր դեղ վրայ չգար ,

Սրտիկ , խետ քեւ չելայ խուն .(7)

(1) Կումրի քէօշ կանէր . [Լումրի = տատրակ] : Կումրի քէօշ  
կանէր ըսելը , կումրի թռչունը ուրախութիւն կա-  
նէր ըսել է :

(2) Էրան = երկրագործական գործիք մը որով ցորեն ցըիւ  
տալով քարիին կուտան և յարդը կը զատեն :

(3) Խամուն =

(4) Կուտանց անսախուն = կոյսերու համար :

(5) Պրինտար սրտիկ = Վիրաւոր սիրտ :

(6) Դաժա = նոր :

(7) Զելայ խուն = Գլուխ չկրցի ելլեւ :

Պէօնմը կէլնես խանա խոճաքեար .

Պէօնմը(8) կէլնես պազար պազրկան

Պէօնմը կէլնես խօճաւ ,

Կեախմը սկում(9) ձիկ կանես էրերում

Ակուն ինչ քեամին վէր ծովուն պէրուղիար .

Արտիկ , մալուլ մի՛ կենայ

Տիւնեէն մարդուս խամար չմնայ :

## VIII

## ԿՈՒԲԱՐ ՎԻՆ ՊԱՂՉԵԿ

Բամիմ' էլաւ բանձրիկ սարերաց

Իրեն(10) խոռը պազչի դռներաց ,

Հէ , եարէ եարէ , շամամէ եարէ .

Իտուր պազչի դուռ արաւ կիսորաց ,

Դեղին ետ խոռը կարմիր երեւաց

Կարմիր ետ խոռը , կանաչն էրէւաց

Հէ , եարէ եարէ , շամամէ եարէ .

Կանաչն ետ խոռը , սըւտակն երեւաց ,

Հէ , եարէ եարէ , շամամէ եարէ :

## IX

## ՊՈՒԽ ԱՂՋԵՐԵ

Դօստ , պաժգ նմանէր բարակ տակ մը ուռ ,

Բամին իը տէր կանէր շուռ ու մուռ ,

Ես քո սիրուն սէվտայ եմ ծուռ ,

Կամ արա սիրա , կամ արա քաւոր .

(8) Պէօնմը = երբեմն :

(9) Կեախմը սկում = պահ մը այնպէս :

(10) Իրեւ = եկաւ :

Որ սիրեր ես մ'աներ վատութեն  
 Կը թորկիմ երթամ կարիպութեն  
 Կարիպութեն էր դառ գերութին .  
 Խաղ մը տի ասեմ մէկ հայերէն .  
 Մէկ տաճկերէն , արապերէն .  
 Ստանպօն եմ տեսեր թուխ ամպն վէրէն .  
 Ով իմ սրտի ուզածն ուզայ .  
 Աստուծոյ կրակ թափի վրայ .  
 Իմ դօստն ի պղտկաբերան , քաղցրալեզու .  
 Բո կումաշ տի բերեմ թաւրիզու .  
 Կումաշ բերեմ թաւրիզու քաղքէն ,  
 Յո թարթախներ նմանէր կունկու ճղէն(1) .  
 Երիցայ թուխ աչքերու դարսէն .  
 Կոտրեցիր իմ սրտի փարտէն  
 Կապեցիր իմ տղայ մաղտէն .  
 Խամով , տէրտով , պէ բուզկեար ումր ի՞նչ անիմ :  
 Պաղչէմ' եմ տեսեր , փառեր վարդն ու բաշեր .  
 Եմ եմ ինկեր խամերաց քաշեր .  
 Շահ ու պլափել ինկեր քու վարսեր ,  
 Ոչ ցորեկ գիտեմ ոչ զիշեր .  
 Երիցայ քու դարտէն ,  
 Կոտրեցիր իմ սրտի փարտէն  
 Կապեցիր իմ տղայ մաղտէն  
 Խամով դարտով պէ բուզկեար ումր ի՞նչ անիմ :  
 Իմ դօստը պաժնիկ ունէր ծովուց քաշած ,  
 Եղունկներ ունդայով տաշած .  
 Ես եմ քո սիրուն խալած մաշած .  
 Երիցայ քու դարտէն ,

Կոտրեցիր իմ սրտի փարտէն ,  
 Կապեցիր իմ տղայ մաղտէն ,  
 Խամով դէրտով պէ բուզկեար ումր ի՞նչ անիմ .

X

Պ Ր Ի Ն Տ Ա Ր Ա Վ Ջ Ի Կ Ը

Դօստ , խետ քե չելայ խուն  
 Դու էլնես բանձր սար ,  
 Ես տի էլնեմ մուր մուր ձիւն ,  
 Թէ դու էլնես ոսկի գերան ,  
 Ես տի էլնեմ արծթէ սիւն .  
 Ակուն կեախմը ձի կամես էրէրում ,  
120-2015
 Ակուն ինչ կեամին պէ բիւզկեար՝ կան գեայ վէր ծովուն .  
 Մէկ դօստ շարէ շապկով էր մէջ մի ընդվարին(2) ,  
 Դու տակմը(3) սուռուն էր մէջ ասա քարին ,  
 Պիտի գամ քեզ յերեւան կանուխ էվարին .(4)  
 Մէկ դօստ , դադրեր խէրանց երեսբաց ,  
 Զեռ երես լուաց  
 Ինչ աչք ինկաւ իմ երես  
 Մուր մուրիկ ելաց ,  
 Ասաց , լաճիկ , երէկ քե ապով ձիկ ծեծած ,  
 Միս ոսկորից բեկրեկած ,  
 Արուն բամբակով է ժողված ,  
 Պինքսեր(5) մալհամով քաւած  
 Ինչ իմ աչք ինկաւ քու երես ,

(1) Ճղէ = կուռնկի թեւի փետուր .  
 (2) Ընդվար = պաղչաւ .  
 (3) Տակմը = միայն , մէկ հատիկ ;  
 (4) Եվարին = երեկոյին ;  
 (5) Պինքսեր = վէրքեր .

(6726-57)

իմ լսալվէն(1) վարդն ոհան վէր ձիկ չշարժած .  
Զղիտցայ թէ դու խօրէ մօրէ խօրօտ էր, թէ ինձ սկուն  
ի թուած,  
երի պաղմ' առ, թող ձիկ տարած թմումած :

## XI

## ԿԱՐՄԻՐ ԵՐԵՍԻ ՊԱՓԷ

Մէկ դօստ, էլնեմ տամպուրվան (2)  
Գեամ քո խէրանց էրտիս .  
Եկայ տեսայ որ դու քներ ես  
Բազկի շողեղէն գլխուդ դրեր ես,  
Բազկի շառաւելք տուեր քո երես .  
Սկում տի չալեմ չում դու քո անուշ քնուց արթնես .  
Կ'ուզեմ պագ մը քո կարմիր երեսներուց առնեմ,  
Վախնամ խռովիս, քո թուխ աչքերը արասուայ, սէպէպ  
կէլնեմ ես .

Մէկ դօստ, խռով մի կենայ, խռով աղէկ չի :

## XII

## ՔԵՍԱՅՈՒԹ ՎԱՐԴԻԿ ԹՈՒՇԵ

Պաղէք մը տեսեր եմ առջեւ ճրագին  
Թուխ ռեհան հով արեր վէր քեափուր վարդին .  
Աղէկ չեմ ասե ես էն ֆէլէքին  
Իմ քեափուր վարդը տարաւ իտուր կիսաղին :  
Մէկ դօստ, աչքերն էր պէլէք ունէր մսրայ թուր (3),

(1) Իմ իւալվէն = իմ իւելքով .

(2) Տամպուրվան (դամպուր զարնող)

(3) Աչք երբ Պէլէք կ'ըսուի, կը նշանակէ Սիւտկունչ և  
թուխը միատեղ: Մորայ թուրն էլ, աչքի բիբ—  
իւաթունն է որ կը փայլի

Առուներն է կապած խիստ ոլոր մոլոր (3) .

Մէկ դօստ կը գեայ քո խէրանց պաղչէն (4)

Քեափուր վարդերաց բուլոր,

Մէջ զմէն վարդերաց էն մէկ վարդն է քեափուր ,

Կ'ուզեմ սակ մը կտրեմ, թուփ եկաւ իրուր ,

Երամ խաւք եկան, առջին էր Արօր .

Վըզքերն էր էրկէն, խալ ինկեր էր բոլոր .

Զեռիկ սեւաւոր, ոտքեր էպաւոր ,

Ոտքեր չէլնէր խետ, կէլնէր խաւքերաց թագաւոր .

Իմ դօստ, լինիմ կարիպ ճնճղուկ

Գեամ քո խէրանց այզին ,

Սև խաղող կայ իգեին ,

Թէ ժուռ քաղեմ վախնամ թոռոմիս

Թէ խասուն քաղեմ, վախնամ խռովիս .

Մէկ դօստ, թէ ժուռ թէ խասուն, էլմ քո քաղողն եմ ես .

Մէկ դօստ, սիրտդ պողչայ ի

Կուշ կումաշ կայ ինե .

Թէ թանկ թէ էժան ,

Քո մուշտէրին եմ ես :

## XIII

## ԱՍՏՋԱ ԿՈՃԱԿԻՆ ԵՐԸ

Էն ձէթիկ պէտիկ աստղեր համերո

Զմէն շարեմ ձիկ կոճակ

Կարեմ իմ կանաչ կապին

(3) Առուներն, կոպերի տակ այն պղտիկ առուակն է, ույ  
արտսունք կը վազէ:(4) Խէրանց պաղչէն, երկու երեսներն են, և ուր արտսունք պյտ  
առուներէն վար կիշնէ հոն:

(5) Քեափուր վարդեր թշերի կարմրութիւնքն են և թուշեր:

(6) Սև խաղող աչքի սև պտուղն է, եթէ համբուրէ:

Հագնեմ երթամ պէր	»	»
Հովիւ ուշքաթափ անեմ	»	»
Կօպալը (1) ձեռնէն հանեմ	»	»
Թըլիմ քիւրէն իրիցեմ (2)	հա եարօ	
Մնձուր տամ քեամին տանի	»	»
Գործլին տամ ոսկչուն	»	»
Մատնիկ շինի իմ մատնով	»	»
Շաւպաղ շինի իմ պամնով (3)	»	»
Խալխալ շինի իմ ոտնով	»	»
Ապրջան շինի իմ ձեռնով	»	»
Շամսիկ շինի իմ սրտով	»	»
Քեամար շինի իմ մէջքով	»	»
Խազէ մը շինի իմ քթով	»	»
Կինտ մը շինի իմ ակնջով	»	»
Թաս մը շինի իմ գլխով :	»	»
Կը գամ կը գամ վանայ խետ	»	»
Դատնամ իմ եար բերեմ խետ	»	»
Բեռնիկ բառնամ առփշում	»	»
Սարպար (4) դնեմ կանաֆիլ	»	»
Ախապէր ախապէր ես քո շուն	»	»
Թունպան (5) շինեմ քե նիսչուն	»	»
Խօնճան շինեմ առփշում	»	»
Փողեր շինեմ ճըլպըլտուն	»	»
Ուռիկ մուռիկ մեր յառէջք (6)	»	»

(1) Կօպալը=Հովուի ձեռափայտը

(2) Թըլիմ քիւրէն իրիցեմ=Ճգեմբովը այրեմ

(3) Պամնով=Հասակով

(4) Սարպար=Բեռան վրայ դրուած յաւելուածական բեռը

(5) Թունպան=վարտիք

(6) Ուռիկ, կը նշանակէ ուռիկ մը պէս ուղիղ բարակիկ երիտասարդ:

Ուռիկ մեր յառէջք անցու (6) » »  
Վարդն առեց փուշն ուրացաւ : » »

## XIV

## ԿԱԼԱՄՍՈՎ ԳՈՂՎԱՏԸ

Լումնակ գիշեր դուս էլայ Խանէր, նանէր, նանանէր  
Ի՞նչ մուրմուրիկ ձիւն մ'եկեր » » »  
Ի՞նչ բորիկ խետ մ'էր գացեր » » »  
Հետ էն խետին ես գացի » » »  
Գացի չում դուռն բակին » » »  
Ի՞նչ սըւտակ լուաց են արած » » »  
Վէր պազրի փշին են փոած » » »  
Կալամով փողպատն է բացած » » »

## XV

## Բ Ա Բ Կ Ս Կ Բ

Քեալայ աղջիկ խիւանդ եմ ես  
Զիւեապ անեմ արե ձիկ տես .  
Առ իմ խնձոր, արի նստի վէր բարձիս,  
Թէ մեռնելու եմ ձիկ չ'ասես  
Թէ ապրելու եմ Աստուած սիրես ձիկ տանես տիրես,  
Թէ սիրելու, կեօ դու գիտես .  
Աղջիկ իրիցայ քո տարտէն  
Կոտրեցիր իմ սրտի փարտէն  
Կապեցիր իմ տղայ մաղտէն  
Իրիցայ գործլի դարձայ .

(6) Յառէջք, պատուհան [Տաճկ.] գէնճէրէ

Աստուած սիրես, եա ձիկ սիրի  
Եա, ձիկ տար խորի .  
Քեալա աղջիկ, կը նմանիս պարի լուսնակ .  
Որ պարար թմումար, քո սէր բարկ էր ձիկ կիրիցայ,  
Իրիցայ գործլի դարձայ .  
Քեալայ աղջիկ: ես դու ելնիմք վէր բանձր պատին  
Իրիկենք վէր կանաչ արտին .  
Եան ձիկ սիրի, եան տի երթամ կարիպութեն .  
Տղայ լաճիկ, երթանք իմ խէրանց պաղչէն .  
Սիրը իմ սրտի սիրով զ'քե տի սիրեմ .  
—Սղէկ ասիր, երթամ իմ խօր մօր մէնէն խարցում անեմ .  
—Տա տղայ անգէտ տղայ, անգէտ որդու տղայ,  
Սպա խապրիկ մը կէր խիտ քե տուայ  
Զէ դու իմ ձէն անուն աւրեցիր  
Խապրիկ չես պախեր, իմ անուն տիւնեէն խկիցիր,  
Սիրը իմ ախզըլ պըլաւաւ (1), դու սէր չունիս պատճառ  
կը ճարես .  
Օրմից խազար օրմից ամպն ելաւ հերեւ աւերեց  
Թուխ ամպ մը ելաւ Մշու տեխաց (2)  
Անու խոնաւ իրե իզար զ'ձի (ինձ) եթաց .  
Քեալա աղջիկ տ'էլնիմ պազրկան, ինկնեմ տիւնեէն .  
Քե խամար ատլաս կումաշ բիրեմ Շամայ քաղթէն .  
Կեազ բիրեմ Հալապու քեաղթէն .  
Մկրատ բիրեմ թաւրիզու քեաղթէն  
Վախենամ խալաթ (3) կալատ Անայ (4)  
Պակաս կտրի, քո շող պաժին կուսուր իյնայ,

- (1) Ախդըլ պըլաւաւ=իւրքս թռաւ, լարդ ու փշուր եղաւ  
(2) Մշու տեխաց=Մշու կողմերէն  
(3) Խալաթ, կը նշանակէ դերձակ  
(4) Կալատ ենայ, պակասաւոր ընէ

Աղջիկ մրկայ իրիցայ քու դարտէն  
Կոտրեցիր իմ սրտի վարտէն  
Կապեցիր իմ տղայ մաղտէն .  
Քե խամար, ինչ կումաշ ատլաս րիրեմ  
Թիւ (5) գոյն չ'լինիր էն գոյնէն,  
Որ էլ գործ չի էլի էն գեործէն,  
Ի՞նչ քեակեց, ասաց վեր խամար ես բերեր  
Բերեր իմ մէրկան խամար  
Կը բերեն սիրողի համար ,

## XVI

## Ն Ա Զ Յ Տ Ի Լ Պ Է Ր

Դու յուստ կուգաս յ'Երեւանայ  
Քամին կը տայ քո ծոց բանայ  
Ինչ քիւրտ կը խի (6) կը հայանայ  
Ինչ հայ կը խի կը զարմանայ.  
Արի, արի, շօրօրվարի  
Նազօ Տիլպար քե յալրան ես . (7)  
Դու յուստ կուգաս,—Հացի Գեղու  
Դու կը քէլէս եղու մեղու,  
Աստուած սիրես պագ մը տու ձի (ինձ) տանիմ դեղու  
Մշու դաշտեր դար ու փոս էր,  
Եար չիմ թորկի շատ ափսոս էր .  
Մշու դաշտեր խոտով, ջրով,  
Զուխտակ քոյրեր մնացէք բարով  
Կեօ (8) ես կ'երթամ խազար տարով ,

- (5) Թիւ=ոչ մի (կարդաւ թիւ)
- (6) Կը խի=կը նայի
- (7) Յալրան=պանչանաւ զմայլեւ
- (8) Կեօ=աչա

Արի, արի, շօրօրվարի՝  
Նազօ Տիլպար քե յայրան եմ :  
Մուշ դաշտեր փէտ կը տաշեն  
Զելվապ տարէք Մուրատ փաշէն  
Զուխտակ քոյրեր խալք (1) կը քաշեն :  
Մուրը Կարապետ տասերկու գաս  
Քառսուն օր բռնեմ քո ծոմ ու պաս  
Դու իմ դօստ անես իմ խօր խարս  
Արի արի շօրօրվարի  
Նազօ Տիլպար քե յայրան եմ :

## XVII

## ՃԱՐԱՊԱՌԻ ԱՂՋԻԿԻ

Քիւրը Դուս էլի, ճամպաղի աղջիկ, դուս էլի պօյդ  
Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, պաղչէն չես գացեր  
Փիւրը Դուս էլի, ճամպաղի աղջիկ, դուս էլի սիրտդ  
Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, լըպիւ (2) չես գացեր  
Քիւրը Դուս էլի, ճամպաղի աղջիկ, դուս էլի ծծուեր  
Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, պօստան չես գացեր  
Քիւրը Դուս էլի, ճամպաղի աղջիկ, դուս էլի երեսդ  
տեսնամ .

(1) Խալք—այլք

(2) Լըպիւ կը նշանակէ կատանութիւն. բամբակ բուրդ  
գուլու արհեստը

Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, գիշեր չես գացեր  
լուսնակ չե՞ս տեսեր  
Քիւրը Դուս էլի, ճամպաղի աղջիկ. դուս էլի ակոաներ  
տեսնամ  
Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, պազար չես գացեր  
սէտէֆ չես տեսեր .  
Քիւրը Դուս էլի ճամպաղի աղջիկ դուս էլի աչքերդ  
տեսնամ .  
Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, ժամտուն չես գացեր  
կանթեղ չե՞ս տեսեր .  
Քիւրը Դուս էլի ճամպաղի աղջիկ, դուս էլի զքեզ  
տեսնամ .  
Աղջիկը Քիւրտի տղայ հարամզատա, քեահէլ չես տեսեր  
մէյտան չե՞ս քաշեր :

## XVIII

## ՃԱՐԱՊ ՈՒ ՓԵՍԱՅՑ ԶԵԱՆ ՏԱԿ

Հարսը . Գացինք խասանք դէմ կռանայ  
Աստուած իւր բարի դուռ բանայ  
Պետրոս խօջէն բարով դուռնայ .  
Գացինք խասանք չում պղտիկ գետ  
Զիւն էր եկեր, բռներ մեր հետ,  
Ավար լաձիկ, մենք դառնանք յետ  
Զէլաւ պազար պազրկանին  
Զէլաւ պազար Պետրոս խօջին,  
Աստուած աւերէր Մատայ Միրզօ տուն  
էն զիտէր իր սարերու խուն (3)  
Զմեղ չբերէր իսկէր մէջ նա ձիւներուն .

(3) Խուն—բնոյթ

Փեսան . Ես պատիկ էր տաս տարեկան  
Ճիւյսող տարէք իմ խէրկան մէրկան  
Իմ թանկ Ասլիսան էլ չտա՞ն էրկան .  
Զէլաւ պազար պազրկանին  
Զէլաւ պազար Պետրոս խօջին .  
Մատայ սարեր ախով փախով (1)  
Զծիւներ կարտեցին փետառվ , բահով .  
Մեր շալկաներ տուին շահով .  
Զէլաւ պազար պազրկանին  
Զէլաւ պազար Պետրոս խօջին :

## XIX

## ՍԱՄԿ Ի ԾՐԱԿԻՆ

Տիլպար գացեր ծովին ի սէլքան  
Ծովին է տուեր ծամեր տարան ,  
Գոմու մաքիք տամ լողուորին  
Որ կը խանէ ծամն ի ծովին ,  
Ոչ կ'առնում ոչ կը ողպանամ (2)  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Գոմու լիզներ (3) տամ լողուորին  
Որ կը խանէ ծամն ի ծովին .  
Ոչ կ'առնում , ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ , ծամն ի ծովին .  
Մոսուռ մաքիք տամ լողուորին  
Որ կը խանէ ծամն ի ծովին

Ոչ կ'առնում ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Մատի մատնիկ տամ լողուորին  
Որ կը խանի ծամն ի ծովին  
Ոչ կ'առնում ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Մատայ խալիսալ տամ լողուորին  
Որ կը խանի ծամն ի ծովին .  
Ոչ կ'առնում , ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Մէլտան ճակատ տամ լողուորին  
Որ կը խանէր ծամն ի ծովին .  
Ոչ կ'առնում ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Թաւթա (4) թունպան (5) տամ լողուորին  
Որ կը խանէ ծամն ի ծովին .  
Ոչ կը խանեմ ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Մըժա խօնջան տամ լողուորին  
Որ կը խանէ ծամն ի ծովին .  
Ոչ կ'առնում ոչ կը ողպանամ  
Ոչ կը խանեմ ծամն ի ծովին .  
Մըւտակ (6) խալիսալ տամ լողուորին  
Որ կը խանէ ծամն ի ծովին .  
Հէմ կ'առնեմ հէմ կը ողպանամ  
Հէմ կը խանեմ ծամն ի ծովին :

(1) Ախով փախով = աչ ու երկիւղէ փախուստ  
(2) Կը ողպանամ (կ'ուզեմ). ողպանալ = ուղել  
(3) Լիզներ=էգ գոմէշ

(4) Թաւթա (Պարսից մէջ գործուած կանաչ կանաւուզ =  
մետաքս)

(5) Թունպան=վարտիք

(6) Մըւտակ = Ապիտակ

## XX

## Ա Ս Մ Ա Ր Ի Ք Ո Ւ Կ Ն

Տանիս վէ կը քէլեմ ես  
Խալքի խիալ (1) խիւանդ եմ ես  
Թուխ աչքերու սպանածն եմ ես.  
Լուսնակն առեր վիրին տներ,  
Ասմար ինկեր անուշ քներ,  
Ասմար, դուռ բաց գամ քեղ ընկեր.  
Զգան գողնան լալ ու պէնտեր  
Թող գան գողնան ոսկու գինտեր.

## XXI

## Ք Ր Ց Ն Ա Վ Ե Ա Ր

Ամպեր երկինք բռներ էր  
Թաթախ ձիւնիկ մը թըլեր էր,  
Բորիկ հետ մը գացեր էր,  
Ես էլ հետ էն հետին գացի  
Գացի եարոջ դուռ բացի.  
Եար քներ էր քրտներ էր  
Վարդն երեսին փռուեր էր.  
Իմ եար կախուած կարմնչէն,  
Տալալ կախուած կարմնչէն,  
Ոսկի գինտեր ակնչէն.  
Մէկ եար ընկաւ մեր պատով,  
Պատի շըքեր կոտրտաւ  
Տալմի (2) փէշեր կտռտաւ.

Կ'երթամ առեմ զոքանչին  
Աղջիկ չի տայ (1) կարիճին

## XXII

## Ա Ս Կ Օ Յ Ի Մ Ա Զ Ե Ր Ե Կ Ս Ա Լ Ա Մ Ի Մ Մ Մ Ե Ր

Քառսուն գութան դաշտ կը բանէր  
Ոսկօն ելաւ ճաշ կը տանէր,  
Սօլ պղտիկ էր ոս կը զարնէր  
Շէկիկ մազեր գետին կաւլէր:  
Արեւ թըլեր վէր մեր բարձին,  
Զուխտ մը շամամ մէջ քո ծոցին,  
Մէկը թող մնայ մէջ քո ծոցին.  
բեւն առեր կամար կամար  
Լուսնակ առեր կամար կամար  
Սալաթ կապեր ոսկի քեամար  
Էն մէկ ճնէլի խաթրի համար:

## VXIII

## Խ Վ Զ Ո Ր Ք

Խիւանդ եմ ես  
Առ քո ինձոր  
Արի ձիկ տես.  
Ալ կօրօխկես  
Ալդ ինչանեմ:

(1) Խիալ = կարծածով

(1) Տալմա = չուխայէ երկար և նեղ վերաբերեանց

(2) Զի տայ = չի տար:

## XXIV

## Ս Ա Ն Տ Ի Խ Ա Զ Ա Ր

Որն է եկեր սահսրի վերեն  
Լաշին թբլիմ նստի վերէն,  
Խաղար բարի պաժնի վերէն  
Փունջ ռհան բուսեր վերէն,  
Խանէ, խանէ, խանէ, խանէ,  
Խիեօ, խիեօ, խիեօ, խիեօ,  
Սահսրն էլեր կ'երթայ խոռվ  
Ես չեմ կրնայ բռնե զօրով  
Պագ մը տու ձիկ՝ գնա բարով,  
Թ'երթաս բարով մեռնիմ սիրով.  
Խանէ, խանէ, խանէ, խանէ,  
Խիեօ, խիեօ, խիեօ, խիեօ,  
Պաժնիկ բարակ ծովէն քետշած,  
Քո եղունկներ ոլնտով տաշած.  
Ես քո սիրուն խալած մաշած,  
Խանէ . . . . .  
Խիեօ . . . . .  
Վերեւ մեր տան առօւ խանած  
Չում մեր զիմաց ռհան ցանած  
Կ'երթամ քազեմ թէ ձիկ սպանած,  
Խանէ . . . . .  
Խիեօ . . . . .  
Լուսնակ զիշեր լուս կը փէլաց  
Մէկ եար տանիս ջուտ կը քէլաց  
Ա.ալաս կապէն բարով էլաւ  
Ա.ալաս կապէն ջոպ եմ զրեր,  
Վանայ քաղաք պահ եմ զբեր

Խանէ խանէ . . . . .  
Խիեօ, խիեօ . . . . .  
Մանուկ ջուր վեր, Մանուկ ջուր վեր,  
Բահ վէր թեւին ռհան ջրէր.  
Վերեւ մեր տան թուփ կէր (1) մասուր,  
Ներքեւ մեր տան թուփ կէր մասուր,  
Ասաուած չիսուր աղէկ կիսուր  
Իմ տեղ շինեց իշու մսուր,  
Խանէ . . . . .  
Խիեօ . . . . .  
Վերեւ մեր տան արտ կորնկան  
Ներքեւ մեր տան արտ կորնկան  
Հիանք ինե (2) կը խրինչան,  
Տառնեմ Ռոկօ, երթամ Աճամ.  
Խանէ, խանէ . . . . .  
Խիեօ, խիեօ . . . . .  
Սահսրն է Հնտի, ծեծով ջնտի,  
Սահսրն է կախմախ, ծեծով չախմախ,  
Սահսրն է կողի, ծեծով բոզ չի  
Խանէ, խանէ . . . . .  
Խիեօ, խիեօ . . . . .  
Մեռնիմ թեւին ուժ կայ ինե.  
Ուժ տուր թեւին, թեւ տայ քարին,  
Բերն ու բարին վէր մեր թաղին,  
Բարն ու քոչն ներքին թաղին,  
Խանէ, խանէ . . . . .  
Խիեօ, խիեօ . . . . .

(1) Կէր=Կար

(2) Ինէ=մէջը

XXV  
Տ Օ Լ Ա (1)

Աղջիկ . Տօլա , Էն օր ինչ դու էլար քու մօրից  
 Քո անուն դրին Խաղարոց  
 Քե դրին ոսկի օրօրոց ,  
 Էն էրկնուց խաղար աստղեր քե ծածկոց ,  
 Էն կանաչ կարմիր անանակ (2) քե բնդոց (3)  
 Լան Աղջիկ քո սնուն ձիկ ասա  
 Էն բանձրիկ սարերու ախարիւնք (4) քե գինի .  
 Էն խաղար խաղար ծաղկունք քե քասայ (5)  
 Խետ խմի , խետ՝ օխէրշ ասա :

## XXVI

## ԵՐԿՆՈՒՅՑ ՏԱՐԿԵԱԽԳԵՐ (6)

Աստուածութեն աշխար սիրեց  
 Ստեղծեց զ'Եւան ստեղծեց զ'Ադամ ,  
 Ստեղծեց զ'գաղան , ստեղծեց զանասուն  
 Զ'Աստուած կաղաչեն խետ բարիլուսուն .  
 Առաւօտման ժամեր որ ծէնեցին  
 Ինն դաս հրեշտակը երկնուց Տարկեախքեր բացին ,  
 Ողորմութիւն չորս կողմ աշխարհ ցրուեցին ,  
 Ողորմութիւն է խետ բարիլուսուն  
 Աստուածն է ստեղծեր հաֆթէ տիւ միլլէթ (7)

1 Տօլա = Տօլաճ , ճ. տառը կրծատուած ու երկու բառը  
 միացուած է որ կը նշանակէ այ տղայ :

2 Անանակ=Միածան :

3 Բնդոց=Օրորոցի նախշուն կապը որ կը շրջապատէ զայն :

4 Ախարիւնք=Ախրիւներ :

5 Քասայ=Հողէ շինուած պնակ

6 Երկնուց Տարկեախքեր=Երկնից մեծ դռներ , տէրկդահ :

7 Հափթէ տիւ=Եօլմանասուն երկու

Էրունք ու թռչունք պապաթ ու պապաթ  
 Եր կը խասուցէր նասիպ ու կսմաթ  
 Արարիչ Աստուած ողորմայ մեղ .  
 Խետ բարիլուսուն աղօթրան էր բաց .  
 Հափթէ տիւ միլլէթ դատրած է դիմաց .  
 Հմէն մէկ իրենց լեզուովկ'աղաչեն զէն քաղցրիկ Աստուած ,  
 Տէր , քո ստեղծած հոգին մի՛ թռղներ ձեռաց ,  
 Ողորմութիւն է խետ բարիլուսուն :  
 Մարդ կայ վէր աշխարհին իր մալ կը տայ մեղքեր կը գնէ ,  
 Որ չը խոստովանուայ վրայ կը դնէ  
 Առաւօտ լուսին շան պէս կը քնէ .  
 Ան , ողորմութիւնից պէ պար (1) կը լինէ .  
 Մարդ կայ վէր աշխարհին խելքով կը համնի ,  
 Առաւօտեան ժամին վեր կը կանգնի ,  
 Էն ողորմութենին արժան կը լինի .  
 Կը փառաւորի Աստուած խետ բարիլուսուն ,  
 Ապղմոս , շարական խետ բարիլուսուն .  
 Ամէն հոգիք հրեշտակ կը տանէ ,  
 Անգէտ մարմնոյ տեղ հողէ զնտան է .  
 Մարդ կայ կը խաբուի էն չար սատանին ,  
 Ողորմութիւն է խետ բարիլուսուն ,  
 Հողից ելեր ենք , մեր ախրը հող է .  
 Սօնին տի մեռնիմք թէ ծեր թէ տղայ ,  
 Խոստովանուեինք , Աստուծոյ ասեմք մեղայ ,  
 Ապղմոս շարական , խետ բարիլուսուն ,  
 Ողորմութիւն է խետ բարիլուսուն ,  
 Երանի որ անմեղ է , էստեղ չմնայ մեղ , զօգանատեղ է :  
 (Մօկացի Աւրղ Օվանէ երգուած)

8 Պէ պար=Ղուրկ

## III

## Զ Ա Ր Ա Վ Ա Մ Հ Ա Ր Ա Վ Ա

Եկանք հասանք յետին կիրակին (հալալա)  
 Մէկ եար աեսեր եմ մէջ խէրանց բակին »  
 Չեռ կոտրի մէտակ (1) գործողին »  
 Մէդակ չգործեր մեր պղափկ հարսին »  
 Չեռ կոտրի լաշիկ գործողին »  
 Լաշի չգործեր մեր պղափկ հարսին »

## XXIX

## Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Խ Ե Ի Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Հանելուկ .

Էն ի՞նչ էր քառասուն մանկունք բանձր էր , անխիմ  
 անպատ էր ,  
 Էն ի՞նչ էր վէր աշխարհին չանք տիւներ մալ շատ էր .  
 Ո՞վ էր առաւօտեան կ'ոլնէր , դառնիկմ աղքատ էր .

Պատասխան .

Երկինքն էր քառասուն մանկունք , բանձրախիմ անպատ էր .  
 Աստուծոյ ողորմութիւն ի , չանք տիւներ մալ շատ էր .  
 Ան ինչ առաւօտեան կը քնի դառնիկմ աղքատ էր .  
 Արարիչ Աստուած ողորմաս մեզ .

Հանելուկ .

Էն զ՞ն էր բանձր կիւլաշ (2) էր ,  
 Էն ի՞նչ պօլ էր վէր աշխարհին անհաջատ (3) կը տաշուէր ,  
 Կամ էնի՞նչ էր , անխինել (4) , անգործել , անգին կումաշ էր .  
 Պատասխան .

Էն մեր տէրն էր , անմախ , անմեռնել , բանձր կիւլաշ էր ,  
 Մեր բազում մեղքերն են , արտասուք զէնի տի տաշէր .

1 Մէտակ = քող երկար տեսակէն գլխի վրայ կը ձգուի և  
 կը հանի մինչև մէջքը ;

(2) Բանձր կիւլաշ — բարձրահասակ և գեղեցիկ :

(3) Անհաջատ — առանց գործիքի :

(4) Անխին — առանց հիւսելու , անչիւս :

Աղամամայ թղենիքն են , անխինել , անգործել , անգին կումաշ էր :

Հանելուկ .

Էն ի՞նչ էր վէր աշխարհիս , անխուն , անխլիմ , անխուփ  
 անտակ էր (2) ,

Էն վո՞ն էր վէր աշխարհին անգին ակ էր ,  
 Կամ էն ի՞նչ կուտ էր վէր աշխարհին՝ մէկ պարի թակ էր .  
 Պատասխան .

Էն անախուն ծովերն են վէր աշխարհին , անխուն , անխլիմ ,  
 անխուփ , անտակ էր .

Կոյս Մարիամ վէր աշխարհին անգին ակ էր ,  
 Անողորմ Պետրոսի կուտն էր մէկ սարի թակ էր (3) .

Հանելուկ .

Էն վո՞ն էր վէր ծովուն օդէն սաղ կ'անէր . (4)

(1) Անխուն , անխլիմ , անխուփ , անտակ — անվերջ , անսպառ ,  
 առանց ծածկոյթի (ամանի իսուփ) առանց յատտէի :

(2) Անողորմ Պետրոս երբէք իր կետնքի մէջ ողորմութիւն  
 չէր տուած , մի օր թոնիթի վրայ հաց թիսած ժամանակ , երբ  
 աղքատ մը նորէն ներկայացաւ , բարկութենէն հացի կուտ մը  
 վերուց զարկաւ աղքատին , նա առաւ փախաւ Պետրոսը գէշերն  
 երազի մէջ տեսաւ կուտը և սարը դրած էին կշիռքի մը երկու-  
 թամերուն մէջ , մէկ մը իրեն երեւաց և ասաց , կուտն քո առա-  
 քինութիւնն էր որ զօռով սղորմութիւն արիր , և արն քո  
 մեղքն է :

(3) Օտէն=Սենեակը

(4) Հայրապետներ ժողոված կանոն կը կապէին կրօնական  
 մասերի վրայ , Արիստակէս Լուսաւորչի տղէն մէջ չէր , եկաւ տասց  
 ցորէն էլ մեր հայրական աղգին վրայ պակաս կանեն , էս ի՞նչ  
 կանոն գապէր էր . Հայրապետներ ասին , գուշ բան շը դիտնայ  
 էսաց որ քս բան շըմգիտնայ , երկու եզ լծեց վէր ծովուն , ասաց  
 ես ծով ափ վարեմ , գուշ մարդ էք , եկէք ցանեցելու տափեցէք ,  
 հայրապետներ ասին մենք քեզ մեղայ , ապա բան բանից  
 պրծուցէր են :

Կամ ի՞նչ էր ծովի տակ նազ կ'անէր,  
Կամ ի՞ն վովն էր, որ իրե վէր ծովուն խաղ կ'անէր.  
Պատասխան .

Դաւիթ մարգարէն նստեր վէր ծովուն սազ կ'անէր,  
Պալասան ձուկ զՅովնան մարգարէն կլեց, ծովուն տակ  
նազ կ'անէր.  
Արիստակէս, Լուսաւորչի տղէն՝ վէր ծովուն վար կ'ա-  
նէր ,  
Հանելուկ .

Ի՞ն ի՞նչ քաղաք է, անխիմ անպատ է,  
Ի՞ն ի՞նչ առաքեալ ի, առանց լեզու է,  
Կամ ի՞նչ թուղթ ի վէր աշխարհին՝ առանց դիր է.

Պատասխան .

Նոյայ տապանն է առանց խիմ ի,  
Եղունիկն ի առանց լեզու ի,  
Թալ փաթութեց զիզ, բերաւ վար աշխարհին, առանց  
դիր ի (1),

### XXX

#### Տ Ի Լ Պ Ւ Բ

Մալիր ա հայ ծալիր ա  
Տիլպէր շիլէն ծալիր ա  
Վարսեր կանծէ մանծ էրա  
Քու պագ ձի (ինձ) հէլալ էրա:  
Կախիր ա հայ կախիր ա  
Հէլին (2) պատէն կախսեր ա  
Վարսեր կտնծէ մանծ էրա  
Քու պագ ձի հէլալ էրա:

(1) Երբ նոյը Տապանէն կռիկն ու եղունիկն արձակեց լուր  
բերելու, կռիկը եղունկան լեզուն հանեց զի լէշկեր է, և դուրս  
քաշեց, եղունիկ տերեւ մը կապեց իր վիզ, եկաւ խապար արաց  
այդ նշանով, թէ աշխար ջրից ցամքեր է, ատոր համար եղունկէ  
վիզ կանաչ նղուն ի:

2 Հէլին=Հայելին

### XXXI

#### Զ Ի Մ Ը Ը Զ Ի Մ

Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ  
Դու վրէ (1) չիս շիար չիս, չիս կարի խաղայ  
իմ լաշկի ծանրութինից չիմ կարի խաղայ,  
Քու լաշին պի տի մէ ձի դու գնա խաղայ,  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ,  
Դու վրէ չիս շիար չիս, չիս կարի խաղայ  
իմ կապի ծանրութինից չիմ կարի խաղայ  
Քու կապէն պի տի մէ ձի դու գնա խաղայ,  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ  
Դու վրէ, չիս շիար չիս, չիս կարի խաղայ  
իմ շապկի ծանրութինից չիմ կարի խաղայ  
Քու շապկիկը պի տի մէ ձի դու գնա խաղայ:  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ  
Դու վրէ, չիս շիար չիս, չիս կարի խաղայ  
Թունպլնի ծանրութինից չիմ կարի խաղայ  
Քու թունպան պի տի մէ ձի դու գնա խաղայ .  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ,  
Դու վրէ չիս շիար չիս, չիս կարի խաղայ .  
Մազերիս ծանրութենից չիմ կարի խաղայ,  
Քու մազերն պի տի մէ ձի դու գնա խաղայ .  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ  
Դու վրէ, չիս շիար չիս, չիս կարի խաղայ  
Թուշերիս ծանրութենից չիմ կարի խաղայ .  
Քու թուշեր պի տի մէ ձի դու գնա խաղայ .  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ .  
Ծնօտիս ծանրութենից չիմ կարի խաղայ .  
Քու ծնօտը պի տի մէ ձի դու գնա խաղայ .  
Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ,  
Դու վրէ չիս շիար չիս, չիս կարի խաղայ

3 Դու վրէ=Դուն ինչո՞ւ

4 Պի տի մէ ձի=Բեր դիր մօտ ինձ

Եծերիս ծանրութենից չիմ կարի խաղայ.  
 Քու ծծեր պի տի մէ ձի դու գնա խաղայ.  
 Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ  
 Դու վըրէ չիս չիսը չիս, չիս կարի խաղայ,  
 Իմ փուրու ծանրութինից չիմ կարի խաղայ,  
 Քու փուրը պի տի մէ ձի դու գնա խաղայ,  
 Չիմը չիմ, չիմ չիմը չիմ, չիմ կարի խաղայ  
 Դու վըրէ չիս չիսը չիս, չիս կարի խաղայ  
 Խալխալիս ծանրութենից չիմ կարի խաղայ  
 Քու խալխալը պէ տի մէ ձի դու գնա խաղայ :

Վ. Ե Բ Զ.

Վ. Բ Ի Պ Ա Կ

ՍԽԱԼ.	ՈՒՂԻՊ.	ԵՐԵՄ
Գացեր իմ կոխւ	Գացեր եմ կոխւ	7
Խոզու փոխանին	Խոզու փոխանին	8
Աըրգ	Աըրղ	9
Ասա=անառակ	Ասա=անառիկ	10
Սարի ածուն և	Սարի ածուն և	11
Երես իաւեց	Երես կանեց	13
Խանձի մանձի	Կանձի մանձի	13
Խամուն=	Խամուն=Հոգսին	14
Իմ դօսքը	Իմ դօս	16
Սուռուն	Սուռուն	17
Արտաւոնի	Արտասուն	19
Վանայ	Վանայ	20
Պարի լուսնակ	Պտրի լուսնակ	22
Հերեւ աւերեց	Արեւ աւերեց	22
Մուռ դաշեր	Մուռ դաշեր	24



ՀՀ Ազգային գրադարան



NL03362294

ՀՀ Ազգային գրադարան



NL0336236

ՀՀ Ազգային գրադարան



NL0336235

ՀՀ Ազգային գրադարան



NL0336234

ՀՀ Ազգային գրադարան



NL0336233

ՀՀ Ազգային գրադարան



NL0336227

ՀՀ Ազգային գրադարան



NL0336226

ՀՀ Ազգային գրադարան



NL0336225

